

ՌՈՔՆԸՈՆԸ ԵՎ ՈՒՐԲԱԹԸ. ԻՆՉ ԿԱ
ԵՐԿՈՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ
/ՍՈՑԻՈԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ/

" the next Morning I began to
Consider of Means to put this Resolve
in Execution, but I was at a great loss
about my Tools ."

Daniel Defoe. The Life and Strange
Surprising Adventures of Robinson Crusoe.
of York. Mariner

Արդի գործարար հաղորդակցության լեզուն, թե՛ գրավոր և թե՛ բանավոր համատեքստում պարբերական, ինքնաբերական, դինամիկ և ճկուն անվերջանալի շտկումների ճառագարն է անցնում, երբեմն արագ և անսկատ, երբեմն էլ բիրտ և հանդուգն կերպարանք ընդունելով: Տնտեսավարության և գործարարության մայր լեզուն՝ անզլերենը իր կանոններն է թելադրում՝ անվերապահորեն ներթափանցելով հայի լեզվամշակույթի տարաբնույթ շերտերը՝ փոխակերպելու համար հայախոս գործարար համայնքի լեզվական վարքագիծը: Հայերենի լեզվաշինության ավանդույթները նորօրյա լեզվաբանների և կենսականորեն կարևորվող մի խնդրի առջև են կանգնեցրել, որն է՝ գործածության մեջ առկա առևտրա- տնտեսական տերմինների ընտրությունը և կանոնակարգումը, այնպիսի տերմինների, որոնք ոչ միայն առավելագույն ճշգրտությամբ արտահայտում են տվյալ տնտեսագիտական և կամ առևտրային հասկացությունը, այլև օրգանական, կիրառելի և մնայուն կարող են լինել՝ հայերենակիր գործարար համայնքի համար: Ով է հայ գործարարը, ուր հանրային շերտից է սերում, ինչ խոսվածքի կրող է: Արդյոք գիտակցաբար է փոխառում տնտեսավարելու արևմտյան ավանդույթները, թե՛ փոխառության գործընթացը դարձել է ցանկալի, խոստումնալից և բարեբեր: Այս հարցերի պատասխանը կարելի է գտնել շուկայի անմշակ խոսքային միջավայրում, որն իր չգիտակցված անմիջականությամբ հրաշալի լեզվամշակության իենք կարող է հանդիսանալ գործարար բառապաշարի ձևավորման համար: Որևէ հանրույթի լեզվական նախընտրությունը ակամա և ինքնաբերական գործընթաց է, մինչդեռ ձեռներեցների հանրույթը, որը առևտրային լեզվի նախնական կրողն ու կերտողն է հանդիսացել բոլոր ժամանակներում և բոլոր հպարակություններում, կարող է անչափ հետաքրքրական լինել իր լեզվական

վարքագծի դրսևորումներով, հանդերձ: Այսպես, եթե կանխավ ենթադրելու լինենք, որ համընդունելի առևտրային բառապաշարի /business terminology/ ստուգաբանական վերլուծությունները ուղղորդում են մեզ դեպի ձեռներեցի “անմշակ” լեզուն /entrepreneurial terminology*, ապա տեղին կլինի նախևառաջ պարզաբանել *ձեռներեց* բառի հարանշանակությունների շղթան: Ստորև բերվում են *ձեռներեց* բառի նախնական բառարանային նշանակությունները և դրանցից սերող բառակապակցությունները.

— /ած./ Նա ով առաջինը ձեռք է տալիս մի բանի, *սկսում* է մի բան անել, <*ձեռնարկու*... *ձեռներեց*> առնել, համարձակ (Մալխասեանց, 1944)

— *ձեռք /փխր./ միջոց*, օգնություն, պաշտպանություն, իշխանություն,

— *ձեռքոց* / հն./ ձեռքի *գործիք*, *միջնորդ*, /հուն./ դյուքին ձեռնարկելի *գործ* (Աճառյան, 1977)

— /ած./ *ձեռնարկու*, *գործարկու*, *ճարի*, աչքաբաց /ժող./, նախաձեռնող, ինքնուրույնաբար գործելու ունակությամբ օժտված, համարձակ, ճարպիկ, հանդուգն (Սուքիասյան, 2009)

— *ձեռք/ուիլ* /Աշ, Ապ. Բլ. Բրբ./ սկսիլ, ձեռք զարնել, *ձեռնել*, *ձեռննտել* /Մշ. Բրբ./, ձեռնարկել (Աճառյան, 1913)

Բառի նորոյա գործածության դաշտը ամբողջապես ըմբռնելու նպատակով դիմենք նրա արդի գործարար անգլերենում առկա սահմանմանը, քանզի *ձեռներեցության* գործընթացը իր ներկայիս նշանակությամբ անգլամետ տնտեսավարության մշակույթի ուղղորդիչն է հայոց գործարար իրականության մեջ: Այսպես, անգլերեն *entrepreneur* գործարար տերմինը հայերենում ունի մի քանի թարգմանական տարբերակ, այն է՝ *ձեռնարկիչ*, *ձեռներեց անձ* (Աղաբեկյան, 2008): Զուգահեռաբար գործում են *venture, venture capitalist* տերմինները /վերջինս թարգմանվում է որպես *նոր շուկայում համարձակ ներդրումներ կատարող ձեռներեց անձ*/: Ուշագրավ է այն, որ անգլերենում վերոհիշյալ բառից սերող *entrepreneurial* բառի կիրառելի թարգմանական համարժեքները *ձեռնարկչատիրական*, *ձեռներեցին բնորոշ* տարբերակներն են, մինչդեռ *ձեռնարկչական դրամամիջոցներ* առևտրային տերմինը զուգորդվում է *venture capital* տերմինի հետ: Նույն հասկացության տերմինացման դրսևորումները բազմազան են և բազմիմաստ արդի գործարար /առևտրային/ անգլերենում: Ստորև ներկայացվում են վերը նշված տերմինների սահմանումները գործարար /առևտրային/ անգլերենում և նրանց թարգմանական տարբերակները գործարար հայերենում.

entrepreneur - /n/ someone who starts a company, arranges business deals; and takes risks in order to

make a profit / նա, ով սկզբնավորում է, նախաձեռնում է գործարար ընկերություն կամ ձեռնարկություն, արկածախնդիր լինելով՝ ձեռնարկում է շահավետ գործարքներ/

enterprise - /n/. a company or business; The company **started** as a family enterprise.

ձեռնարկություն կամ գործ, Ընկերությունը սկզբնավորվեց որպես ընտանեկան

գործ 2. business activity: Bell Canada and Systemhouse wil establish an enterprise to

provide computer services to the telecommunications industry./ առևտրային

գործունեություն, գործարար նախաձեռնություն, ձեռնարկություն/,

Բել Կանադա և Սիստեմհաուս ընկերությունները կհիմնեն միևնույն ձեռնարկություն՝ հեռահաղորդակցության ոլորտը համակարգչային ծառայություններով ապահովելու միտումով:

3. business activity considered as a whole, especially in relation to other parts of the

economy, society: government and enterprise; free enterprise; public enterprise;

private enterprise/առևտրային գործունեությունը որպես բաղադրիչ՝

տնտեսության, հասարակության մյուս ոլորտների, կառավարությունը և գործարար ձեռնարկությունները, ազատ ձեռնարկչատիրություն/ ձեռներեցություն,

պետական ձեռնարկություններ, մասնավոր ձեռնարկություններ/:

venture - /n/ a new business activity or project that involves taking risks;

ևոր գործարար նախագծի **համարձակ ձեռնարկում**

She identified potential customers for a new *business venture* .

Նա փորձում էր ճանաչել միևնույն *գործարար ձեռնարկի* հավանական սպառողներին:

Saudi Arabian and Japanese officials agreed on a *joint venture* 'to build oil refineries in both countries.

Սաուդյան Արաբիայի և Ճապոնիայի պետական այրերը համաձայնեցին երկու երկրներում նավթավերամշակող *համատեղ ձեռնարկություն* ստեղծել:

venture into sth/phr vt/ - if a company or investor ventures into an area of business, they become

involved in it for the first time - համարձակ ներխուժել ևոր գործարար ոլորտ՝ անտեսելով վտանգը

/ME *venteren, fr. aventure*/, an undertaking involving risk, chance & danger

արկած, համարձակ, բախտախնդիր և վտանգավոր ձեռնարկում,
joint venture /business collocation/ - համատեղ ձեռնարկություն
venture capital /business collocation/ - ձեռնարկչական դրամամիջոցներ/
կապիտալ

venture capitalist /business collocation/- նոր գործարար ձեռնարկի մեջ
ներդրումներ կատարող (Longman, 2007)

Լեզվի սոցիալական փաստ լինելու իրողությունը ստիպում է մարդուն ապավինել նորին համակերպվելու համար տարածության և ժամանակի մեջ ի սպաս բերված իր նոր սոցիալական դերակատարությանը: Նոր սոցիալական իրողությունները պայմանավորվում են նոր տնտեսական իրողություններով: Քաղաքակիրթ տնտեսավարության մշակույթը, որը արդի գործարարության բառապաշարի պայմանակերպողն է, ձևավորվել է երբեմնի գաղութային Անգլիայում: Խնդրի առնչությամբ ուսումնասիրվող անգլալեզու տեքստային նյութը համընդգրկուն է: Ներկայիս *ձեռներեցության* հիմնադրույթների առաջին համակարգված նկարագրությանը հանդիպում ենք Դանիել Դեֆոյի *Ռոբինզոն Կրուզոյի կյանքը և զարմանահրաշ արկածները* քաջածանոթ վեպում, որը կարող էր լինել տնտեսավարության դասական ձեռնարկ իր ժամանակին: Արդյոք Ռոբինզոնը չէ այն *տնտեսական մարդը (homo economicus)* և *սոցիալական մարդը*, որին ներկայիս տերմինաբանական բառարանները բնորոշում են որպես ձեռներեցի կամ ձեռնարկչի, որը ճարպիկ է, համարձակ, նախաձեռնող, արկածախնդիր և կենսունակ՝ պատրաստ դիմակայելու վտանգին, քանզի գոյատևելու խնդիր ունի: Եվ արդյոք իրապես անմարդաբնակ է կղզին: ...In all the Time of my solitary Life , I never felt so earnest, so strong a Desire after the Society of my Fellow-Creatures , or so deep a Regret at the want of it... now was my Time to get me a Servant, and perhaps a Companion, or Assistant; and that I was called plainly by Providence to save this poor Creature's Life.....Here I gave him Bread, and a Bunch of Raisins to eat, and a Draught of Water, which I found he was indeed in great Distress for...now he would serve me as long as he liv'd; I understood him in many Things, and let him know, I was very pleas'd with him; in a little Time I began to speak to him, and teach him to speak to me; and first I made him know his Name should be *Friday*, which was the Day I sav'd his Life ...I likewise taught him to say *Master*, and then let him know, that was to be my Name ... I was greatly delighted with him, and made it my Business to teach him every Thing, that was proper to make him useful, handy, and

helpful; but especially to make him speak, and understand him when I spake... (Defoe, 2007)

Քնության վտանգները հաղթահարելու և կենսապայմաններ կառուցելու հնարամտությունը դեռևս բավարար չէ Ռոբինզոնի համար: Նա փնտրում է Մարդու, Գործընկերոջ, Գործակատարի, Կամակատարի, որի հետ հաղորդակցությունը /իր լեզվով իր գործի մասին/ փոխհամաձայնություն կստեղծի և կկայանա այնքան սպասված դիսկուրսը: Այս փոխհամաձայն ընկերակցության ներսում առկա է կոդու տեղաբնակի անվերապահ պատրաստակամությունը՝ մասնակից լինելու իր փրկչի և տիրոջ անդրոժյան կենսակերպին: Ուրբաթը կրողն է մեկ լեզվի և պատրապտ է փոխառելու երկրորդ լեզուն՝ անգլերենը, որի կրողը իր փրկիչն է, որն իրեն պատմում է այն ամենի մասին, ինչն օգտավետ է և դյուրին: Զրույցների նկարագրություններում առկա է գործարարության և ձեռներեցության արդի հիմնարար հասկացությունների բացատրությունը: Գործարարության լեզվի ձևավորմանը բնորոշ է լեզվական վերակոդավորումը (code-switching): Լեզվական վերակոդավորումը տեղ է գտնում այն միջոցին, երբ հաղորդակցությունը միմյանցից տարբերվող գոյամշակույթների միջև դառնում է կենսական անհրաժեշտություն, և գործնական դիսկուրսի միջոցին փոխառվում են գոյապահպան պատկերացումները, նյութական իրերի հանդեպ վերաբերմունքը, բառերը, որոնք ճշգրիտ արտահայտում են այդ պատկերացումները: Փոխառված հասկացությունները պայմանաձևվում են թիրախ լեզվամշակույթի համատեքստում՝ դրսևորելով իմաստաբանական փոխակերպումներ և տարբերակվում որպես տերմիններ՝ օժտված ճշգրիտ նշանակություններով և գործածությամբ: Այսպես, *ձեռներեց, ձեռներեցություն, ձեռնարկչատիրություն* հասկացությունները հայ գործարարի լեզվամշակույթում փոխակերպվում են իրենց առաջնային նշանակություններից որակապես տարբեր, *վերակոդավորված* գործարար տերմինների:

Օգտագործված գրականություն

1. Հր. Աճառյան, Հայերեն գաղափարական բառարան, Թիֆլիս, 1913
2. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Եր., 1977
3. Սո. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944
4. Ա. Սուրիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2009
5. Ա. Աղաբեկյան, Գործարարության և տնտեսագիտության բացատրական բառարան, անգլերեն-հայերեն-անգլերեն, Եր., 2008
6. Longman Business English Dictionary, Pearson Ed. Limited, 2007
7. Coulmas, Florian, Sociolinguistics, Cambridge University Press, 2005
8. Будагов Р. А., История слов в истории общества, Москва, 1971
9. Daniel Defoe, Robinson Crusoe, Oxford University Press, 2007